МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

**ք. Երևան** **26.04.2024թ.**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1-1

***(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)***

## ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից 2023 թվականի սեպտեմբերի 27-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է Դիլիջանի հանգստյան գոտու կառուցման աշխատանքների ձեռքբերման «ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԳՐԱՆԴ ԱԼՅԱՆՍ» ՍՊ ընկերության կողմից (հվհհ՝ 02308803, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի երկրորդ նիստի արձանագրության 10-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2023 թվականի դեկտեմբերի 1-ին Հիմնադրամի և Ընկերության միջև կնքվել է նույն ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 8.15 կետի համաձայն «Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է **<u>այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով</u>**: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: **<u>Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային</u>**

**միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է**»:

Հաշվի առնելով վերոգրյալը, 2024 թվականի մարտի 25-ին Ընկերությանը էլ. փոստի միջոցով համապատասխան համաձայնագիր կնքելու առաջարկ է ներկայացվել, սակայն այն սահմանված ժամանակահատվածում չի կնքվել, ուստի Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չեն կատարվել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը և 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

## ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ

ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ